**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**24.11.2025թ. կնքված թիվ ԵՔ-ՄԱԾՁԲ-26/2**
**ծածկագրով գնման պայմանագրի**

ք. Երևան «02» « 02 » 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ–ն, ի դեմս տնօրենի ժ/պ Գ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 24.11.2025թ. կնքված թիվ ԵՔ-ՄԱԾՁԲ-26/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, ինչպես նաև Երևան քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց **վճարման ենթակա գումարը սահմանել մինչև 5500000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն**:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.3 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համաձայնագրի պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագրի կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ 2026 թվականի հունվարի 1-ից:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք.Երևան, Արգիշտիի 1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| ՀՀ 900012410016 | Հ/Հ 1510036414050100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 02524368 |
| Վ.Պապիկյան ______ (ստորագրություն) Կ.Տ. | Գ. Խաչատրյան ______ (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված թիվ 1
24.11.2025թ.-ին կնքված թիվ ԵՔ-ՄԱԾՁԲ-26/2 գնման պայմանագրի
«02» «02» 2026 թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71811100/502 | Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ | 0 | 1375000 | 1375000 | 2750000 | 2750000 | 2750000 | 4125000 | 4125000 | 4125000 | 5500000 | 5500000 | 5500000 | **5500000** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900012410016
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Գերատեսչական շենքերի պահպանման
և շահագործման» ՓԲԸ
ք.Երևան, Արգիշտիի 1
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510036414050100
ՀՎՀՀ 02524368

Գ. Խաչատրյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.